ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի <<Մեղրաձորի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ը ՀՀ կառավարության 2011թ-ի հունիսի 10-ի N22 արձանագրային որոշման պահանջների համաձայն հայտարարում է բաց մրցույթ հետևյալ թափուր հաստիք համալրելու համար.

Ընտանեկան բուժքույր- 0,75 դրույք

ՀՀ կառավարության 2011թ-ի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով բաց մրցույթի մասնակից կարող է լինել ցանկացած անձ, որը կբավարարի ստորև նշված պահանջներին՝

1. Միջին մասնագիտական կրթություն համապատասխան մասնագիտությամբ
2. հինգ տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ վերջին հինգ տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն,
3. բժշկական էթիկայի կանոնների իմացություն:

Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության քաղաքացին, ինչպես նաև այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր Հայաստանի Հանրապետությունում ունեն կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն և ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Թափուր տեղի հավակնորդների կողմից ներկայացվում է՝

1) դիմում/լրացվում է տեղում/
2) մեկ լուսանկար 3x4 չափի,
3) քաղվածք աշխատանքային գրքույկից (աշխատանքային ստաժ ունենալու դեպքում),
4) ինքնակենսագրություն,
5)անձնագրի, միջին մասնագիտական կրթության դիպլոմի, վերապատրաստման վկայականի պատճենները և բնօրինակները,
6) արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը,
7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դիմումատուի ցանկությամբ,
8) օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո մրցույթի մասնակիցը կծանոթանա այն իրավական ակտերի ցանկին, որոնցից բաղկացած է լինելու հարցատոմսը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ընդունվում են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ <<Մեղրաձորի ԲԱ>> ՀՈԱԿ-ի աշխատանքային խմբի կողմից /Կոտայքի մարզ գ. Մեղրաձոր /,բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10.00-15.00-ը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2018թվականի հուլիսի 20-ը

Մրցույթը տեղի կունենա 2018թ.հուլիսի 26-ին <<Մեղրաձորի ԲԱ>> ՀՈԱԿ-ում , ժամը 13:00-ին:

Մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել <<ՀՄեղրաձորի ԲԱ>> ՀՈԱԿ-ի աշխատանքային խմբին: հեռ. 098343899, 094280837

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացված փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: